Տիգրան Մանսուրյան

Կոմպոզիտոր, երաժշտագետ, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ



Ծնվել է 1939թ. ՝ Բեյրութում:

1940-ականների վերջերին ընտանիքով տեղափոխվել է Հայաստան: Երաժշտություն ուսանել է Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում (1956-65թթ.): Զուգահեռ սովորել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում (1960-65թթ.), ապա ավարտել է ասպիրանտուրան:

1967-86թթ. ժամանակակից երաժշտության տեսություն է դասավանդել Կոնսերվատորիայում:

1986թ. Մանսուրյանին շնորհվել է երաժշտության պրոֆեսորի կոչում:

1992-95թթ. եղել է Կոնսերվատորիայի ռեկտորը:

Տիգրան Մանսուրյանը կոմպոզիցիայի ժամանակակից հնարներ (ինչպես օրինակ՝ նեոկլասիցիզմ, դոդեկաֆոնիզմ, վեբեռնիզմ) է ներմուծել Հայաստան: Հագեցած է նրա ստեղծագործությունների ցանկը:

1989թ. գրել է «Սառցե թագուհին» պիեսի երաժշտությունը, բազմաթիվ դաշնամուրային, կամերային, վոկալ ստեղծագործություններ, հայտնի ֆիլմերի մեղեդիներ՝ Փարաջանովի «Նռան գույնը», Հենրիկ Մալյանի «Մենք ենք, մեր սարերը», «Կտոր մը երկինք», Միքայել Վարդանովի «Եվ այսպես ամեն օր» և այլն: